



Տ. ՇԻՐԻՆ

ՀԱՍՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Ա. ՏՄԻԹԻ 2

ՈՒՐԲԱԹ, ՆՈՅԵՄ. 26/1 ԴԵԿՏ. 1909

Պայման. — ԴՐԱՍԸ՝ տարեկան կանխիկ բաժանորդագրութեան գրութիւն չունի: Միայն հեռաւոր քաղաքներու և արտասահմանի մէջ գտնուող ազգայիններ՝ ԴՐԱՍԸ ստանալու համար ամէն եռամսեան կանխիկ պիտի վճարեն 13 զրչ.: Այսքան:

Իսկ Պոլսոյ մէջ, ինչպէս նաև Պոլսոյ շրջակայ քաղաքներուն և գիւղերուն մէջ ձեռքէ պիտի ծախուի հատը 40 փր.ի. փափաքողներ, համակրողներ՝ մեր գործակալներու և ցրուիչներու ձեռքէն կանխիկ պիտի առնեն ամէն անգամ մէկ դահեկան վճարելով:

ԴՐԱՍԸին յատուկ մէկ երկու մասնաւոր ցրուիչներ ունինք, մեր ցոյց տուած հասցէներուն թերթ տանելու համար, ի Պոլսո: Առաջին թիւերը ընդունողները երբ չեն ուզեր շարունակ առնել, թող հաճին միւս անգամ անոնց արժէքը տալ և ապա իրենց տրամադրութիւնը յայտնել:

Կանոնաւորապէս բաժանորդագրուիլ ուզողներու հասցէին կրնանք փոփոխել ուրոյն թերթ դրկել. բայց այդպիսիները պէտք է եռամսեայն կանխիկ վճարեն, ուր որ ալ ըլլան»

Մեր գործակալները պարտին ամէն շաբաթ իրենց հասցէին յղուած թերթերուն գրամը անմիջապէս ուղարկել մեզ. երբ երկու շաբաթ դրամական յապաղում տեղի ունենայ, ԴՐԱՍԸին առաքումը իսկոյն կը դադրի:


Դրամները կրնան զրկուիլ ամէն ատեն, մէկ գահեկաննոց նամակի փոխելու վերածուելով կամ մոնտա փոփոխով:

Անոնք որ «Դրախտ»ին կանոնաւորապէս բաժանորդագրուիլ կ'ուզեն նոր տարիէն սկսելու չեն, հապա, «Դրախտ»ին երեւման օրէն, որպէսզի, կանոնաւոր գօլէքսիօն մը չինելու կարող ըլլան ու նիւթերը անջատ չի մնան:

Տ Մեր գործակալները հաճին իմաց տալ մեզի թէ, ամէն ատեն որչափ ԴՐԱՍԸ կրնան սպառել:

Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Ագ-Շեհր — Յակոր էֆ. Եագօեան
 Ամասիա — Հայկազուն էֆ. Թապալեան
 Այնքապ —
 Ասափազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
 Աֆիօն Գարա-Հիսար —
 Գայսերի — Կարապետ էֆ. Քէչիչեան
 Գանիրե —
 Գասքեմօնի —
 Դրննրլար — Մակար էֆ. Փափաղեան
 Դուրս-Պէլե — Անդրանիկ էֆ. Օհանեան
 Դօնիա — Աբրահամ էֆ. Թօսունեան
 Դօնսքանթա — Տեարք եղբարք Մէլէքեան
 Եօզլաս — Աւետիս էֆ. Աստուրեան
 Էչմէ — Դաթէոս էֆ. Տօնիկեան
 Էնկիւրիւ — Մարտիրոս էֆ. Սիւիտեան
 Էսիրնէ — Հաճի Կրօն էֆ.
 Թալաս —
 Թօզաթ —
 Իզմիր — Կարապետ էֆ. Յարութիւնեան
 Կէլվէ — Պողոս էֆ. Պարոնեան
 Կեօնէն — Յովնաթան էֆ. Յ. Աբամեան
 Մարաճ — Յակոր էֆ. Արըգեան
 Մարսուսն — Միհրան էֆ. Տատրեան
 Միջագիւղ — Քերովբէ էֆ. Կարապետեան
 Մէրսին —
 Նիկովիլիա — Օննիկ էֆ. Էպէեան
 Նիւեօրֆ —
 Չօրում —
 Պանսրմա — Կարապետ էֆ. Դանիէլեան
 Պալքէսեր —
 Պրուսա — Խարէլէմ էֆ. Սօրանիտիւ
 Պարսիզակ — Օննիկ էֆ. Դաւիթեան
 Ռոսոսթօ — Պետրոս էֆ. Մալխասեան
 Սեբասիա —
 Տարսանել —
 Տէնէֆ. Մասէն —
 Քիլիս —
 Ֆիլասէլֆիա — Յակոր էֆ. Տատրեան



ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԿՂԵՄԷՍ Մ. ՏԱՏՐԵԱՆ

Պոլիս, Պապ Ը Ալի հասսեսի
թիւ 38. Զ. Պէրպէրեան տպարան

Զեռֆէ կը ծախուի 40 փր.
Հեռաւոր բաղաճներու եւ Ար-
սասանմանի համար միայն ե-
ռանսեան 13 դր.

درخت

ارمنیجه و ترکجه رساله موقوتہ

سی-اسی، علمی، ادبی و اخلاقی

صاحب امتیاز و مدیر مسئولی

کفہ مس دادریان

باب عالی جادہ سندہ بریان مطبعہ سی

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 2

ՈՒՐԲԱԹ, ՆՈՅԵՄ. 26/1 ԴԵԿՏ. 1909

ԱՒԽԹԱՄԱՐ

(ԱՒԱՆԴԱՎԷՊ)

Ծիծաղախիտ վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առափնեայ
Ծովն է մըտնում գաղտագողի
Ամէն գիշեր մի տըղայ:
Ծովն է մըտնում, առանց նաւակ,
Բազուկներով առնացի
Զուրը ճողփում, լող է տալի
Դէպ ի կղզին դիմացի:
Խաւար կըղզուց պարզ ու պայծառ
Մի լոյս կանչում է նըրան,
Մի վառ փարոս նըրա համար,
Զը մոլորի իր ճամբան:

Սիրուն թամարն ամէն գիշեր
Այնպէս կրրակ է անում,
Եւ ըսպասում է անհամբեր
Այնտեղ՝ մօտիկ դարանում:

* * *

Ծրփում է ծովն ալեծածան,
Ծրփում է սիրտը տըղի.
Գոռում է ծովն անդաձայն,
Նա կըռուում է կատաղի:
Եւ թամարը՝ սըրտատըրոփ
Արդէն լըում է մօտիկ
Ջրի ճովփին, ու ողջ մարմնով
Սիրուց այրում է սաստիկ:
Լըռեց: Ծովի խաւար ափին
Կանգնեց սեւ-սեւ մի ստուեր...
Ահա և նա... իրար գըտան...
Կասկածաւոր լուռ գիշեր...
Միայն ալիքը վանայ ծովի
Մեզմ գիպում են ափերքին,
Հըրհըրելով հեռանում են
Շըշունջներով անմեկին:
Նըրանք ասեա՞ փըսփըսում են...:
Ու աստղերը կամարից
Ակնարկելով բամբասում են
Լիրը, անամօթ թամարից...
Բամբասում են կուսի սըրտում...
Ժամ է արդէն... ու կըրկին
Մինն ալեկոծ ծովն է մըտնում,
Միւսն աղօթում եղերքին...
Բայց միանգամ չարկամ մարդիկ
Նըրանց գաղտնիքն իմացան,
Լոյսը հանգցրին սեւ ու սաստիկ
Մի մութ գիշեր դիւական:
Մոլորուեցաւ խաւար ծովում
Լուզորդ տըղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերճւմ
Հառաչանքներն — «Ախ, թամար...»

Մօտ է ձայնը. խօլ խաւարում,
ժայռերի տակ սեպացած,
Ուր ամենի ծովն է գոռում
Մերթ կորչում է խլլացած
Ու մերթ լքւում ուժասպառ:

«Ախ, Թամար...»

*
* *

Առաւօտեան ծովը ծրփաց,
Ափը ձրզեց մի դիակ,
Նըրա շուրթին, պաղ, կարկամած,
Ասես, մեռած ժամանակ
Սառել էին երկու բառ,

«Ախ, Թամար...»

Այն օրւանից սըրա համար

Կըղզին կոչւեց «Ախթամար»

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Սէրը՝ վիճակահանութիւն մըն է, արդիւնքը՝ յաճախ մահ:

§

Սէրը՝ լեզու չունի, բայց սիայն արցունք:

§

Սէրը՝ բով մըն է, յորում կը ձուլուին այր և կին:

§

Կեանքը առանց սիրոյ՝ պատկերի սնամէջ շրջանակ մըն է:

§

Սէրը՝ ծառ մըն է, վիշտը՝ անոր արմատը, խինդը՝ անոր
ծաղիկը:

§

Սիրոյ անձնատուր եղողը՝ խորհուրդին հրաժեշտ կուտայ:

§

Սէր և գինի եղբայր են, կը գինովցնեն մարդը:

§

Սէրը՝ սիջնակէտ չունի, կամ կը կորսնցնէ իսպառ, կամ
կը փրկէ:

ԳԱՆԿՒՆ ՄԷՋ ՓՈԹՈՐԻԿ

[Իրական պատմումք]

Ա.

Շռախ...

Շո՛ւտ ըրէք, շո՛ւտ կը պոռային:

Հոգեսարս գանգիւն մը վերի վայր կ'ընէր նաւին ամբողջ սրահները, տենդայոյզ վայիւն մը պարզապէս, որ վարը, անկուշտ ալիքներուն փրփրերախ հալածանքին միացած՝ անհունին կատղեցուցիչ լռութեանը մէջ կը վագրամոնչէր: Բազմութիւնը կը բրգանար, կիներու, աղջիկներու արշաւասոյր աղաղակները զիրար կը խաչատէին, զիրար կը հերձատէին, մինչ նաւը իր պողպատեայ երկնապող կոկորդէն դուրս կը ժայթքէր երկարածիգ ողբ մը, որ ծովուն լայնածաւալ լոյծ պորտը ճեղքելով Մօտա — Պուռնիի մոխրատիպ ապառաժներուն, ափափեայ կողերուն առջև կը փշրուէր, կ'օրհասէր:

Կոհակներու նման բրգացող բազմութեան հետ արտաբերուող աղաղակները շփոթութեան մատնած էին մեքենավարները: Հիմայ իրար կը հրժտէին, Արեւելքցիի վառ հետաքրքրութիւն մը ամէնուն խելքը գլխէն առեր էր, բան մը տեսնելու խօլ մարմաջը՝ կ'ողորէր ամբողջը, և հակառակ ազմկայարոյց պոռչոտութեան դեռ ամբողջ նաւին և փրփրերախ ջուրերուն վրայ կամապաշտ գաղտնիք մը կը սաւառնէր վարազաթիւ: Պղտիկները կուլային, կը ճըւային, մինչ տարեցները աւելի անտարբեր՝ կը ճխային, լայն ժպիտ մը սփռելով մեծաշառաչ ժխորին վրայ, ժպիտ մը որ կը հալածուէր իրենց բռնազրօսիկութենէն, անտարբերութեան, անխորհուրդութեան եզրերը փայփայելով միայն:

Նաւը գեռ իր յուսակտուր ողբը կը շարունակէր, օձազալար ալիքներուն փրփրոտ ալօսներուն խորը տարաբաղդութեան հէքիաթ մը թաղելով: Ոտքերու գոփիւններուն տակ նաւին տախտակամածները ուրիշ օրուընէ աւելի կը կոշկոճուէին, ամառնային հեղձուցիչ տաքութիւն մը կը վերամբառնար մարդկային հսկայ զանգուածին առաջ բերած գարշ շունչերուն հետ: Շատեր գամաբախն բազրիքնե-

րէն բռնած՝ ցնորունակ նայուածքներով կը հետեւէին խուռ-
նամբոխ հրմշտուկներուն որ միջնագարիան արտակարգ
երեւոյթ մը երեւան կը բերէր:

Բայց այս ամէնը.

Այս ամէնը ամբողջ կոյր գաղտնիք մը ունէր իր ծո-
ցին մէջ:

Մարդ մը ինքզինք ուժգնօրէն նաւին հսկայ անիւնե-
րուն վրայ էր նետած:

Ք.

Պահ մը՝ ոչ մէկ տղաղակ, ոչ մէկ ժխոր: Զուրերուն
վրայ, երկաթեայ անիւներէն քիչ մը անդիով, մարդկային
մարմին մը կը տատանէր, որուն վերամբարձ թեւերը՝ զոջա-
ցողի մը վերջին ճգնաժամը կը փորձէին: Դեռ չունչ ունէր
ապրելու և իր մարմինը գիականալու վախը չունէր այնքան:
Ինչ որ անխուսափելին էր ան եղաւ:

Զախջախիչ անիւներուն վրայ խոյացող այդ բաղդա-
զուրկը՝ կաշմբուռն բազուկներով օժտուած երկու նաւազնե-
րու միջոցաւ ծովէն դէպի նաւ կը բերուէր: Հիմայ մէկ եր-
կու ապտակ կ'ընդունէր ան, իր զարհուրելի ունայնամտու-
թենէն ուշաբերելու համար: Բարեբաղդաբար ան վրիպած
էր երկաթեայ անիւներուն հարուածէն, միմիայն թեթեւ
բաղխսումի մը պատճառաւ, իր ճակտին վրայ չեղակի պատ-
ռուածք մը ընդունելով, ուրկէց արտահոսող վարդազոյն
արիւնը շաղապատած էր անոր գէմքը, անճանաչ ընելու
ատիճան:

Հէք բժիշկ մըն է, կը մուտար քարց մարդուկ մը:

Հայ բժիշկ մը, կ'աւելցնէր երկրորդ մը:

Երեւակայեւ թէ գիտութեան մարզն ալ կրնայ զգալ իր
երակներուն մէջ անէութեան դժոխքմբեր հեշտանքը:

Այդ օրուան դառնակակիծ արտայայտութեան զգացումը
հաւասարապէս կը շամփրէր ամէնուն հոգին, վեր հանելով
այն լլկանքը որուն մարդ կ'ենթարկուի ո՛ր և է պատահարի
առջեւ:

Ու բերնէ բերան, այդ զոհարեր մարդուն անունը իր
կսկծալի շրջանը կը կատարէր, զարհուրանքի, խառնուածքի
բացառութիւններն ու տարօրինակութիւնները արոհելով:

Շատեր կը վեհերէին այս կեղերջական տեսարանը դիտելու, ուր անէանքի կատաղի երանգ մը կը մակաղէր:

Տակաւ շոգեհաւն ալ հեւ ի հեւ կամուրջ կը ժամանէր, բազմութեան վիթխարի զանգուած մը թափելով նաւամատոյց, ուրտեղ ոսկրաջախջախ բժիշկն ալ աչքի կը զարնուէր հարիւրաւորներու մէջէն, գլուխը ճերմակ պանսերով փաթաթուած, Սիւլի բրիւտոմի տորակուած Անօթը յիշեցնելով:

«Մի՛ դպչիք, խորակուած ե ան:»

ԶԱՀՐՈՒՄԱՐ

(Յաջորդին)

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ԾԱՆՅՈԹՈՒԹԻՒՆ ՄԸ

Մանօթ սրտի դժնդակ հիւանդութեան վրայ, որ վերջին տարիներուն մէջ անհամեմատօրէն շատցած մեծ աւերներ կը գործէ, շա՛տ խնամով գրոյի մը պատշաճուած է, ճոյնիսկ 20 տարուան ենթակայի մը կողմէ, դեռ առանձին գիրքի չի վերածուած, յարմար դասեցինք իբր փորձառական իրաւան պատմութիւն հետզհետէ արտապել մեր պարբերականին մէջ այսօրուրէն սկսեալ, յօգուտ ընթերցողներու եւ ընդհանուր հասարակութեան: Արդէն գրոյիկն յառաջաբանի: Եւ պատմութեան շարքին մէջ պէտք եղած մանրամասնութիւնը պարզուած ըլլալով հեղինակին կողմանէ ի մասին սրտի հիւանդութեան այլազան փուլերուն, այսօր ծանօթութիւնը շատ իսկ է ընթերցողներուն գիտութեանը համար, բաւ է ակնարկ մը նետել ի ստորեւ դրուած նիւթերու ցանկին վրայ:

Իրոյկը ինքնին խօսուն եւ կարկառուն օրինակ մըն է ցոյց տալու նամար թէ ենթակայի մը կողմանէ գրի առնուած այս հաւասարիմ ինքնակենսագրութիւնը, կամ իր բառով ինքնակարագրութիւնը ո՛րքան կարեւոր հարց մըն է:

ՆԻԻԹԵՐՈՒ ԲԱԺԱՆՄԱՆՅ ՅԱՆԿԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(ենթակայի մը պատմութիւնները:

ԳԼՈՒԽ Ա.

Սկզբնաւորութիւն սրտի հիւանդութեանս,
ինչե՞ն եւ ե՞րբ առաջ գալը:

ԳԼՈՒԽ Բ.

Դեպ ի Պոլիս:
Տեղափոխութիւն եւ օգափոխութիւն:

ԳԼՈՒԽ Գ.

Ցաւիս պատմութիւնը,
Սրտի հիւանդութիւն մը որ ցաւ ունի:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Սրտի հիւանդութեան պատճառը եւ դարմանումը:

ԳԼՈՒԽ Ա.

Որո՞նք ենթակայ կ'ըլլան, ինչե՞ն յառաջ կուգան սրտի
հիւանդութիւնները:

ԳԼՈՒԽ Բ.

Ո՞ր բաները վնասակար են սրտի հիւանդութեան:
Ենթակայ մը ի՞նչ բաներէն պէտք է զգուշանայ:

ԳԼՈՒԽ Գ.

Բնական եւ առողջապահական միջոցներու կիրառութիւնը:
Օդ, ջուր, կերակուր, հագուստ:

ԳԼՈՒԽ Դ.

Սրտի հիւանդութեան դեղերուն վրայ ծանօթութիւններ:
Իմ գործածած դեղերս:

ՅԱՌԱՋԱՐԱՆ

Բնութիւնը քե պատճող է,

Եւ քե արգահատող:

Բժշկութիւնը՝ որ Բնութենէն ծնած է, անոր կը պարտի
իր մեծամեծ յաջողութիւնները: Բնութիւնը՝ մեծ ուսուցիչն է
բժշկութեան: Ուր որ բժշկութիւնը անկարող կը հռչակուի,
հոն երբեմն բնութիւնը հրաշալիքներ կը գործէ: Բժշկու-
թիւնը կը սխալի շատ անգամ, բայց ո՛չ բնութիւնը:

Եւ իմ բուժումս կամ գէթ բարեփութումս կը պարտիմ մա-
նաւանդ բնութեան ներգործութեան, քան՝ բժշկութեան.
մեծագոյն օգուտը կը քաղեմ բնութեան ըմբոյսնած անձան-
ձիւր բարիքներէն (օգէն և ջուրէն) քան բժշկներու սուղ

դեղերէն: Մեծն Նափուլէոն կըսէ «Մենք ապրելու համար շինուած մեքենայ ենք: Ապրելու սկզբունքին հակառակ մի գործէք: Անոր հետ մի՛ իյնաք: Անիկա թող տուէք որ ազատօրէն պաշտպանէ ինքզինք: Անիկա ձեր դեղերէն աւելի լաւագոյն գործ կը տեսնէ»:

Միջազգային վիճակագրութեամբ այսօր հաստատուած մեծ իրողութիւն մըն է թէ, հիւանդութեանց մէջ սրտի հիւանդութիւնը օրէ օր ահռելիօրէն բազմանալու վրայ է. որուն բոլոր գլխաւոր շարժառիթները ի հանգէս բերուած են գրեթէ ներկայ գրքոյկին մէջ, մասնաւորապէս երկրորդ մասին Ա. ին գլխուն մէջ, բժշկական հանգէսներու և մասնազէտ բժշկներու յաշտարարութեանց առաջնորդութեամբ:

Ժողովրդական իրական առած մը կայ. «Փորձառուն է բժիշկը». ամէն գիտութեանց հիմն ու բանալին է փորձառութիւնն ու գործնականութիւնը: Յաւակնութիւն թող չի համարուի, երբ արձակ, համարձակ յայտարարեմ թէ, քան երկար տարիներէ ի վեր սրտի հիւանդութեամբ տառապելով, տուայտելով ստացած անձնական փորձառութիւնս ու խորագին պրպտումներս թեւադրութիւն մը եղաւ ինձ այս գրքոյկը պատրաստելու իմ դժբաղդ վիճակակիցներու օգտին համար, որուն մէջ կը յանձարարեմ քսանամեայ փորձառութեանս արդեանց նախախալիքը:

Մասնագիտական գրքոյկս տաղտուկ չը պատճառելու համար համեմուած է հետաքրքրաշարժ մանրադէպերով, նշանաւոր ասացուածներով, խրատականներով և հրահանգներով: Արդէն սրտի հիւանդութեան համար աւելի խրատ եւ յանձնարարութիւն պէտք է, քան դեղային դարման, և որովհետեւ, սրտի հիւանդութիւնը իբր անբուժելի ախտ ծանօթ է, չվարակուելու կամ զգուշանալու համար կարժէ ամէն բան լսել, գիտնալ և ըստ այնմ շարժիլ: Հետեաբար, ամէն գլխէն ետք գրած եմ հատընտիր առողջապահական բարոյախօսութիւններ, որոնք կը սիրեմ հաւատալ թէ, նախազգուշութիւններ ձեռք առնել փափաքողներուն համար բարերար թեւադրութիւններ պիտի ըլլան: Ոչ ապաքէն բազում հիւանդութիւններ անխոհմութեան և անզգուշութեան հետեանքներ են, ու նաեւ մեղանշումներ բնական և բարոյական օրինաց հանգէպ:

Գրքոյկիս վերջին գլուխը հիւանդութեանս ժամանակս միջոցին իմ յաճախ գործածած դեղերուս մէկ հակիրճ բայց խիստ ուշագրաւ յիշատակութիւնն է :

Բժիշկներուն համար չէ մեր գրքոյկը, անոնցմէ ոմանք թերեւս նուազ կամ ոտաւել կրնան օգտուիլ փորձառական տեղեկութիւններէս, ան տարրեր խնդիր, բայց երբ ես յաջողիմ տարաբաղդ վիճակիցներուս համար ներկայիւս օգտակար ծառայութիւն մը մատուցանել, ու մանաւանդ ներշնչել անոնց թէ, վախճալու չեն որտի հիւանդութիւններէ, որոնք միշտ վտանգաւոր չեն կրնար ըլլալ իրենց գտնատեսիլ երեւոյթներովը, նոյն իսկ քրօնիք ալ եղած ըլլան կամ հինցած, և երբ անոնք պատմութիւններէս և յանձնարարութիւններէս իսկապէս օգտուին, արդէն պսակուած պիտի ըլլան յոյսերս :

Անհուն շնորհակալութեանս առհաւատչեայն կը մատուցանեմ վաղեմի մոսնապէտ ու նշանաւոր բարեկամ բժիշկ Ազնուաշուք Տօքթ. Փեթրաք էֆէնտի Չիլինկիրեանի, որ սիրայօժար գրքոյկս անգամ մը աչքէ անցընելու բարեհաճութիւնն ունեցաւ իմ առաջարկիս վրայ : Շատ գոհ մնացի իր ներհուն թերադրութիւններէն և գիտողութիւններէն :

Ազն. Տօքթ. Տիգրան էֆ. Սիւնի եւս չի զլացաւ իր բարեկամական աջակցութիւնը նուիրել այս գործին :

Ազնիւ բարեկամի մը հետագայ սիրուն նամակը, որ հաճելի անտակնակ մըն էր ինձ համար, ուրախութեամբ և շնորհակալութեամբ կը հիւրընկալեմ հոս իբրեւ երկրորդ յառաջարան նպատակայարմար :

Ամենայն հաճութեամբ պատրաստ եմ թրքերենի վերածել սոյն ձեռնարկս, եթէ մի բարեհաճէր սք յօգուտ թրքաբարբառներու բարեհաճի յանձն տունի տպագրական ծախքը բովանդակ :

.....

Տարսանել, Յունուար 17. 1908

Անգուգական Բարեկամ.

Կեանքիս մէջ չեմ յիշեր երբեք անցուցած ըլլալ ա՛յնքան հաճելի եւ երջանիկ գիշեր մը, բայց ի այն հիւրընկալուած վերջին գիշերէս, երբ առիթը ունեցանք ամիս մը առաջ

Պոլիս ձեր տանը մէջ միասին կարգալու սրտի հիւանդութեան վրայ գրած ձեռագիր գրքոյկդ, ծայրէ ի ծայր:

Գտայ թէ երկդ՝ իր ամբողջութեամբ համակ բուռն զգացումով, խանդավառ և զգայուն ոգիով ու նաեւ յստակ և դիւրամբունիլի ոճով խմբագրուած նկարագրութիւն մըն էր: Տխրալից էին այլ և այլ ժամանակներու մէջ ունեցած ցաւերուդ պատմութիւնները, որոնք խորապէս յուզեցին և թախծութեամբ համակեցին զիս, որոնց ազդեցութեանց ներքէն հո՞գեա: Անկէ ի վեր միշտ կը խորհիմ թէ, մարդկային կեանքը ո՞րքան յարափոփոխ ելեէջներով ու թոյնդաւ շոյնական իրադարձութիւններով առլի և ո՞րքան անըստոյգ է:

Երբ այն պահուն երկուքս ալ յուզուած էինք, ալ տրամադիր չէի գրքոյկիդ մասին գաղափարս յայտնելու, թէեւ կռահեցի թէ, կ'ուզէիր ինձմէ բան մը լսել: Հիմակ, պատեհ առիթով մը ասկէ կը գրեմ:

Առաջին օրէն հիւանդութեանդ տարրեր դրուագները այնպիսի լիրական գոյներով կը պատկերացնես որ, ուշիմ ընթերցող մը կրնայ դիւրաւ ըմբռնել և եզրակացնել թէ, սրտի հիւանդութիւնները յաճախ ինչէն և ինչպէս կրնան առաջ գալ, և մենք կեանքին հանգէպ ո՞րքան զգուշաւոր ըլլալու ենք:

Արդարեւ չկայ տիեզերքին մէջ աւելի թանկագին բան, քան՝ կեանքը և ամողջութիւնը մարդուն, կարծէ ո՞րքան որ հոգ տարուի անոր: Գնահատելի և մեծապէս շնորհաւորելի չե՞ն այն ամէն գրութիւններ, յօդուածներ և գիրքեր, որոնք ամողջապահութեան կարեւորագոյն հարցին շուրջ կը դառնան, ըլլան անոնք այլազան ախտերու վրայ ընդհանուր կամ մասնաւոր տեսութիւններ: Թերեւս ունանք, — հեշտախնդիր մարդիկ — պիտի չուզին հիւանդութեան մը վրայ գրուած այսքան տխրալից պատկերացումներով գիրք մը կարդալ. րոյց ես տսիկա գերադաս կը համարեմ այն տեսակ գուարճալի և սիրային վէպերէն, կամ արկածալից կեղծ ու պատիւր պատմութիւններէն, որոնք ոչ միայն բարոյացուցիչ ու դաստիարակիչ հանգստանք մը չունին և օգուտ մը չեն ընձեռեր մարդուն, այլ, վնասակար են իսկ, այդօրինակ շինծու վէպեր կարդալու տենչը՝ վերջը կրնայ պատճառել մեծ տանջանք:

Դուք ձեր յառաջարանին մէջ յայտնած էիք թէ. վիճակակիցներդ միայն կրնան օգտուիլ գրքոյկէդ, պահ մը կը խորհիմ թէ, ճիշդ է այս կերպ սահմանափակում մը որովհետեւ.

(1) Գրքոյկիդ մէջ կան այնքան առողջապահական թարմ և հրահանգիչ բացատրութիւններ, բարոյական ընտիր պատուէրներ, և առողջ սկզբունքներ որ, մանաւանդ քաջող մէկը հոն պիտի գտնէ իրեն անհրաժեշտօրէն օգտակար էական գիտելիքներ: Ուստի, երկդ հիւանդներէն աւելի քաջողներուն համար նպատաստօր է:

(2) Ըստ իս, առողջապահութեան աւագ կարեւորութիւնն շեշտող ու մանաւանդ մասնագիտական ախտերու վրայ ճառող այսօրինակ օգտակար գիրքեր՝ աւելի պէտք է որ քաջառողջներուն ուղղուած ըլլան կամ անոնց ձեռքը գտնուին, որպէս զի, առողջապահական օրէնքները քաջ ուսումնասիրելով ու պէսպէս հիւանդութիւններէն ու ցաւերէն օրինակ առնելով զգուշաւոր ըլլան իրենց կեանքի դժուարին ընթացքին մէջ, չէ՞ մի որ «արգելումը՝ բուժումէն աղէկ է», հիւանդը արդէն հիւանդ է, թերեւս անոնցմէ ոմանք այնպիսի ցաւալի վիճակի կամ վախճանի մը հասած են որ. կը տարակուսիմ թէ, չեն կըրնար օգտուիլ այսպիսի արդիւնաշատ յանձնարարութիւններէն, այնքան՝ որքան պիտի օգտուէին քաջառողջներ: Բան մը կայ սակայն, դիտեցի թէ, րազմամիայ ենթակայիդ մէկ ազնիւ փափաքն է, ասով մեծապէս խրախուսել և գտնական դիմակակիցներդ, որպէս զի, երբ իրենք զիրենք իրաւամբ ենթակայ տեսնեն՝ չվախնան, ասիկա գովելի նպատակ:

Ձեր գիրքին բնարանին հակադրած չեմ ըլլար երբ ըսեմ թէ, հիւանդութիւններ ալ կան կամքէն անկախ «յաճախ բնութեան օրինաց գէմ մեղանչումներ» չեն, որոնցով նախախնամողը հրաշալիքներ ի հանդէս բերել կուզէ, «Ամէն բաները բարի գործակից կըլլան անոնց որ զկատուած կը «իրեն»:

Ձեր գրքոյկը հզակեան է իր մասնագիտական յատկութեամբը, և յոյժ ուշագրաւ քառամիայ ենթակայիդ կողմանէ փորձառական ուսումնասիրութեամբ գրուած ըլլալուն հա-

մար: Մեր մէջ չեմ յիշեր սրտի հիւանդութեան վրայ ճառող ուրոյն աշխատասիրութիւն մը, թոքախտի վրայ գրուած գործեր շատ կան, թէև սրտի հիւանդութեան վարակուողները բացողատարար քիչ են. դարձեալ կարծեմ մասնաւոր և բաւականաչափ բաներ գրուած չեն անոր նկատմամբ: Ցաւալի բայց ակնյայտի իրողութիւն մըն է թէ, այս հիւանդութեամբ մեռնողներ շատ եղան վերջերս ի Պոլիս, ինչպէս դուք ալ անոնցմէ մէկ քանիներուն անունները նշանակած էիք ձեր գիրքին էջ, ո՞րչափի կը հասնի արդեօք անով տառապողներուն թիւը, որ չենք գիտեր: Հետեալաբար, յիշեմ որքան որ ուշագրութիւն դարձուի քու այս երկիրդ, գիտնալու այս հիւանդութեան շարժառիթները, և խոյս տալու անոր արհաւրալից հետեանքներէն:

Կը զարմանամ թէ, ինչպէս ձեր հիւանդագին վիճակովը ու մանաւանդ ձեր երկար տառապանքներուն մէջ ժամանակ կը գտնէք այսքան օգտակար երկասիրութիւններ պատրաստելու: Դժուարալոյժ խնդիր: Որովհետեւ, ասիկա ձեր առաջին հեղինակութիւնը չէ, բայց, ըստ իս, ասիկա պէտք է ընդունիլ ձեր միւս աշխատասիրութեանց գլուխ գործոցը: Ինչ աննկուն կամք, և ինչ յամառ աշխատանք:

Գերազնիւ բարեկամ, ի սրտանց կը վշտակցիմ ձեզի, և ջերմապէս կը շնորհաւորեմ: Ձեզի համար սրտագին կը մտաբերեմ կատարեալ առողջութիւն և անդորրութիւն, այլոց համար օգտակարութիւն, գիրքիդ համար ալ երբ հրատարակես յաջողութիւն:

Միշտ անկեղծ
Քոյդ Յովհ. Յ. Աճեմեան

ԴՐԱՆՑԻՈՒ ՎԵՍԻՆ

ԼԵՅՏԻ ԻԶԱՊԵԼ

Ա.

Ի Ս Փ Լ Ի Ն

Լորտ Մաունթ Սէվըրն իր Լոնտոնի բնակարանին մեծ գրասենեկին մէջ՝ բազկաթուղի մը վրայ նստած էր: Իր մազերը կանուխէն ալեւորած և իր նախապէս առոյգ դէմքին

վրայ, հիմա, վշտի նշանները կ'երեւային: Իր ոտքին մէկը բրդեղէնով մը փաթտած՝ թաւշեայ բազմոյցի մը կռթնցնելով՝ անոր ասոր կոխած ըսուած հիւանդութենէն տառապած ըլլալը կը գուշակէր: Տարիքը հազիւ 49 էր թէեւ, սակայն մէկ նայուածքով կը հասկցուէր թէ ինք ապաժաման ծերացած էր: Մարդոց մէջ շահած էր անուն մը, իր համբաւը՝ մեծ պաշտօնեայի, երեւելի հրամանատարի կամ քաղաքագէտի տիտղոսին մէջ չէր պարփակուեր, այլ հաճոյքի, գինարբուքի, ծայրայեղութեան, խաղամոլութեան և ըն. տեսակին պատկանող սրիկայութեան մէջ: Ոմանց ըսածին նայելով յիշեալին միակ յանցանքը մտքին պարունակին մէջ կը կայանար, որտի պարզամտութեան և բարեգործութեան տեսակէտով աննման էր: Երանի թէ Մր. Ուիլիէմ Վէյնի վիճակը ունենար: Անիկայ 25 տարեկանին՝ իրաւաբանական աշխատութիւններով և լրջախոհութեան և ջանքին շնորհիւ ամէնուն քով յայտնի մէկը դարձաւ, իր ընկերները զինք հաճոյքի, զրօսանքի տանելու չէին յաջողեր, այնպէս որ իր անունը դատաւոր Վէյն տիտղոսով կը մակդիրուէր: Ինք ասոնց սիրահար ըլլալով իր ջանքերուն շնորհիւ այս աշխարհին մէջ անուն մը կարենալ ապահովելը գիտէր, և անոր համեմատ կը շարժէր: Թէեւ Լորտ Մաունթ Սէվըրնի ընտանիքին կը պատկանէր, սակայն անոր դիրքն ու տիտղոսին ժառանգ կանգնելու տեսակէտով հաւանականութիւն չէր սնուցաներ: Ծերունի Լորտը եթէ նոյնիսկ վախճաներ՝ իրմէն առաջ երկու երիտասարդ ժառանգորդներ կային, իւրին բնաւ կարգ չի պիտի գար: Պարագանքները անանկ բերին որ, ծերունի Լորտը վախճանեցաւ և անոր երիտասարդ ժառանգորդներէն մին Ափրիկէի և միւսը Օքսֆորտի նաւային մրցումին մէջ մեռան, և Ուիլիէմ Վէյն, այն երիտասարդ, աղքատ և իրաւաբանութեան ուսանողը՝ մէկէն ի մէկ աչքը բացաւ թէ չէ Լորտ Մաունթ Սէվըրնը դարձաւ, որով տարեկան 60,000 ոսկւոյ հասոյթի մը ժառանգորդն ու տէրն էր: Զարմանալի չէ որ այսպիսի երիտասարդ մը՝ շուտով իր ճամբան չփոքուց, իր հարստութեան և իր վայելչութեան տեսակէտով հարկաւ աշխարհ իր շուրջ կը դառնար, զինք մեծարելով ու չղոյմնելով: Սուղ ատենէն՝ ժամանակին ականաւորներէն մին դառնալով, շուտով ինքզինքը վեղխութեան

տուաւ, և ամէն ոք անոր վախճանը կը կռահէր անկումին մէջ: Սակայն իր մեծութիւնը և տարեկան պատկառելի հասոյթ մը մէկ երկու օրէն չէր փճանար: Իր մինչեւ 49 տարեկանին՝ դեռ ամբողջովին փճացած չէր թէիւ, սակայն իր կնճռալի կեանքը յուզումնառիթ և անյոյս էր: Իր վիճակը ժողովուրդին ծանօթ էր՝ ինչպէս նաեւ իր ընկերներուն եւ իր պարտապահանջներուն: Բայց անոնք իր քաշած նեղութիւնը և գիրքին գէշ հանգամանք մ'ունենալը իրեն չափ չէին կրնար հասկնալ: Տարիներ տուա՛յ զգուշութեամբ եթէ մտածէր՝ թերեւս այս փորձանքները դարմանէր, բայց իր գէշ օրերը չի հաշուելով՝ իր պարտքերուն մեծութիւնը ծայրայեղօրէն կրկնապատկեց, անանկ ո՛ր իր վիճակը չի կարենալ ծածկելու աստիճան գիրքի մը հասաւ, խայտառակութեան և անկումին ժամանակը կը մօտենար: Անոր ամուսնութիւնն անգամ խելահասօրէն չէր կատարուած, որովհետեւ Կրէթնա Կրինի մէջ աղջկան մը սէր տալով և հակառակ անոր հօր արգելքին՝ փախուստի ձեւին տակ իր պսակը կատարուած էր, մինչ աղջկան հայրը՝ իր զաւակը ժառանգութեան հաւանականութիւնէն զրկելով, չէր կրցած այսպէսով ինքն ալ հարստութեան մը տիրանալ: Մինչ այս մինչ այն, կոմսուհին իր ամբողջ կեանքին տեւողութեանը՝ միակ աղջիկ զաւակ մը աշխարհ բերած և անոր հագլիւ 13 տարեկանին՝ ինք մեռած էր, ուրիշ զաւակ չէր ունեցած: Այդ միջոցին, Լորտը, այս մտածումներով զբաղեալ՝ սեղանին վրայի թղթէ գէզերուն ի տես՝ կը գտնուէր, երբ ծառան ներս գալով՝ «Մի Լորտ, պարոն մը եկեր զձեզ տեսնել կ'ուզէ» ըսաւ: «Ո՞վ է» պատասխանեց Լորտը առանց ծառային ձեռքի քառթը տեսնելու:

«Ահաւասիկ քառթը Մի՛ Լորտ, Ուէսթլինէն Մր. Գարլայլն է:»

«Մր. Գարլայլ... արդեօք ի՞նչ կ'ուզէ, ըսէ թող հրամայէ:»

Ծառան Մր. Գարլայլը ներս հրամուց: Յիշեալին լաւ ուշադրութիւն ըրէք, երկայնահասակ, բարեմոյն անձ մըն էր: Խօսակցութեան պահերուն ըստ իր սովորութեան կը ծռէր, — իր մարմնոյ անդամները համեմատական էին, փայլուն գոյնով, սեւամազ և մեծաչուրի խաթուկ մըն էր: Վերջապէս ի տես իրեն ամէն ոք ազնուականութիւն և լըջու-

թիւն կը գտնէր, այր թէ կին. ո՞վ որ ալ ըլլար շատ հաճոյք կը զգար անկէ։ Ինք գիւղի մը փաստաբանին աղան նսաւ ինքն ալ փաստաբան, Օքսֆորտի համալսարանին մէջ կրթուած, քաղաքավար պարոն մըն էր, ներս մտած պահուն, գէպի Լորտը առաջանալով, այս վերջինը իր ձեռքն երկնցուց։

— Բարի եկաք, Գարլա՛յլ, կը ներէք։ Կը տեսնէք թէ տեղէս չեմ կրնար կոր շարժիլ... ոտքս սոսկալիօրէն կը ցուի։ Այն թշնամիէս՝ Կոկիթ ըսուած հիւանդութիւնէն նորէն վարակուեցայ... հրամայեցէք նստեցէք... Լոնտոն կը մնաք։

— Ո՛չ, հիմակ Ուէսթլինէն կուգամ, լոկ զձեզ տեսնելու եկայ, Տի՛ւր Լորտ, ըսաւ Գարլայլ։

— Ձեզի ի՛նչ կերպ ծառայութիւն մը կրնամ ընել, ըսէք, աւելցուց Լորտ կասկածով։ Որովհետեւ Գարլայլին՝ իր պարտապահանջներէն մէկուն կողմէ փոխանորդաբար եկած ըլլալը կուահեց։ Մը. Գարլայլ իր աթոռը Լորտին տանելով ցած ձայնով մը։

— Միլո՛րտ, ձեր Իսթլինի ապարանքը լսեցի թէ պիտի ծախուի, ստո՞յգ է։

— Վայրկեան մը կեցէք, ըսաւ Լորտը, ձայնը կտրելով, այս հարցումնուդ նպատակը ի՞նչ է, յանուն վստահութեան և յանուն պատուի ըսէ՛ք, բացէն ի բաց ըսէ՛ք. իմ պարտապահանջներուս կողմէ այստեղ գալով բերնէս խօսք առնելու եկած էք։

— Միլո՛րտ, ըսաւ Գարլայլ, ստոյգ է որ փաստաբաններու խօսքին կը կասկածուի ըստ սովորականին, բայց իմ կողմէն ձեզի այդպիսի ձեւակերպութիւն ընելըս միտքերնէդ մի՛ անցունէք, կեանքիս մէջ մէկու մը խարդախութիւն ընելս չեմ կրնար կոր յիշել, ասկէց հտքն ալ չեմ յուսար որ ընեմ։

— Կը ներէք, Մը. Գարլա՛յլ, եթէ ինծի եղած խարդախութեանց և նիւթուած խաղերուն կէտը գիտնանք, ամբողջ աշխարհը անվստահ բռնելուս պիտի չի զարմանաք, հրամայեցէք խօսքերնիդ շարունակեցէք։

— Ձեր փոխանորդէն գաղտնի հասկցայ թէ Իսթլինի մէջ ունեցած ամպուանոցնիդ պիտի ծախուի, եթէ այդպիսի բան մը կայ, ես պիտի առնեմ։

—Որի՞ համար:

—Ինծի համար:

—Ձեզի՞ համար, ըսաւ Լորտը քմծիծաղ, փաստաբանու-
թիւնը շատ գէշ գործ մը ըլլալու չէ... Մը. Գարլա՛յլ:

—Այո, գէշ չէ, բայց հօրեղբօրմէս, մօրմէս և հօրմէս
ինծի բաւական հարստութիւն մնացած է, հիմտկ այդ
դրամներով կալուած մը գնել կ'ուզեմ, Իսթլինի մէջ ունե-
ցած ամառանոցնիդ գործիս կուգայ, եթէ կրնաք փո-
խանցել...:

—Մը. Գարլա՛յլ, գործերս շատ գէշ ըլլալուն հարկ չեմ
տեսներ զանոնք ուրանալ, եւ արդէն շատ դրամ պէտք է:
Դեռ Իսթլինի ամառանոցս առնուած չէ,

—Ձնչին գումարի մը համար գրաւի դրուած է, հիմա
եթէ զայն ծախեմ գէշ չըլլար, առնուազն ձեռքս քանի մը
հազար ոսկի կուգայ և այսպէս ատեն մը ևս կը թափառիմ:
Իսթլինի չէնքին ծախու առնուելը եթէ իմացուի՝ մեղուե-
րու պէս գլխիս շուրջ կը հաւաքուին և ձեռքս դանկ մը
անգամ չանցնիր, հիմա եթէ ծախենք իսկ, պէտք է գաղտ-
նածածուկ ըլլայ, կը հասկնա՞ք կոր, ըսաւ Լորտ:

—Այո, կը հասկնամ:


—Եթէ այս կերպ յօժարիք, ուրիշէն աւելի կը նախընտ-
րեմ որ դուք առնէք, արժէքը կուտա՞ք. 70,000էն վար
գնով չեմ տար:

—Շատ պահանջեցիք, տիար,

—Իսկական արժէքէն շատ վար է արդէն, գիտեմ, բայց
այս կերպ ծախուած կալուածները իրենց բուն արժէքը չեն
բերեր:

—Մինչև հիմա կարծեմ թէ Իսթլինը ձեր ազկան ան-
ուան արձանագրուած է, ըսաւ Գարլա՛յլ, լրջութեամբ:

—Ոչ, ատանկ բան չիկայ: Եղածը եղած անցած է, Մը.
Գարլա՛յլ, այլեւս օգուտ չըներ, այս հաշուով ազջիկս առանց
դրամի իսկ պիտի մնայ: Արդէն այդ խորհրդածութիւնը զիս
կը հալեցնէ, կը լնացնէ կոր: Եթէ երբեք միսթարութիւն
մը ունիմ անոր պատուաւոր ամուսնութիւն մը կնքելուն
ներչնչելիք յոյսն է:



ՊԻՐ ԱՎՈՒՃ ԹՓՐԱԳ

Հէր ան կէօզէթ իզլէրինի,
Մէթին սագլա տիզլէրինի,
Միզանա ալ սէօզլէրինի,
Զիւն էօրթէճէք կէօզլէրինի

Պիր ավուճ թօփրագ:

Մէվթտէն գօրգմա տուր սէն սէրին,
Ֆայտէսիզ տիր ահ ու էնին.
Պիր կիւն սէն տէ օլունճա տէֆն,
Հիսսէն սալթ պէշ արշըն քէֆին

Պիր ավուճ թօփրագ:

Հայաթընա գըլ սէն նազար,
Տիւքէնմէքտէ ազար ազար,
Օլսան Համիտ, հախօտ Չէզար,
Նասիպին իւշ արշըն մէզար

Պիր ավուճ թօփրագ:

Էճէլ կէլիպ, սալտըրաճագ,
Նէն վար իսէ գալտըրաճագ,
Շէօյլէ հալան անտըրաճագ,
Օլ տէմ սէնի գանտըրաճագ

Պիր ավուճ թօփրագ:

Ղայէթ գէնկին օլսան վէլէվ,
Նամ ու շանըն չըգսա տիլէ,
Էյի տիւշիւն սէն տէ հէլէ,
Սօնընտա կէչմէ՞զ մի էլէ

Պիր ավուճ թօփրագ:

Կէլսէ պիր չօգ շէյ տիլիմէ,
Տիւգսէմ տէ պին պիր քէլիմէ,
Սօրարըմ ագլը սէլիմէ,
Նէ՞ կէչէճէք սալթ էլիմէ

—«Պիր ավուճ թօփրագ»

ԳԸՍՍԷՑԷՆ ՀԻՍՍԷ

« Դ Ր Ա Ն Տ » Մ Ի Ի Տ Ի Ր Ի Թ Է Թ Ի Ն Է

Ազիզիմ,

Պատ էլ վէֆաթ պիլէ ումամագ իքէն, հալը հայաթտա
կէօրմէք իլէ շէրէֆեսայ օլտուղըմ «Դրախտ»ընըզը ալտըմ:
Պաշտան պաշա օգուտըմ: Զիւնքի:

Օգուճագ մանէվիյէթին զըտասը տըր: Ղըտասըզ գալան
պիր վիճուտ, էրիր, չիւրիւր, էգիլիր, պիւզիւլիր, գաիֆ-
լէշիր, գուվլէթտէն տիւշէր, ճիսմին ֆէնէրի սայըլան կէօզ-
լէր տունուզլաշըր: Ղըտասըզ գալան մանէվիյէթ տէ պէօյլէ

տիր, գալպէ պիր պօշլուգ, զէհնէ պիր գարանլըգ չէօքէր, ֆիքը տունուգլանլը, ինսան հիշլիքտէ պիր հիչ գալլըր:

Օգուճագ սէյյահաթ տըր: Ինսան խայալ գանատլարընը չարփըշտըրարագ տիյարտան տիյարա, մէմլէքէթտէն մէմլէքէթէ կիտէր, հըլտըրըմէվի պիր չապուգլըգ իլէ տաղլարտան, տէրէլէրտէն, օրմանլարտան, չէօլլէրտէն, օքիանոսլարտան կէչէր, գութպլարա սէյիրտիր: Ճինս ճինս ա-տամլար, չէշիտ չէշիտ ատէթլէր, տիւրլի տիւրլի ֆիքըլէր, նէվանէվ թէրագգըյաթ վէ կէօնակէօն իճատլար կէօրիւր: Վէ, էմին օլունըգ քի, սէյյահաթ մէսարիֆինի չըգարաճագ գափար օլուն, պիր իսթիֆատէ էտէր:

Օգուճագ մանէվիյէթին ժիմնասթիյի տիր: Թալիմ ի պէտէնիյէ իլէ ուղրաշան պիր վիւճուտ գուզվէթլէնիր քանլանլըր վէ ճանլանլըր: Օգույան ատամ աղլար, կիւլէր, էօֆքէլէնիր, սէվինիր, մաղմուլաշըր, իւմիւտտէն իւմիւտսիգլիյէ, վէ իւմիւտսիգլիքտէն իւմիւտէ տիւլէր, ֆիքը ճիւանանլըր, գալպ չարփար, զիհնէ պիր քիւշայիշ կէլիր: Օգուճագ սինիրէ, գանա վէ ճանա նուֆուգ իշլէտիր:

«Դրախտ»ընըղը սէվտիմ: Վէ չայէտ, գըսմը թիւրքիսինտէ «Աֆիթապը ճիհանթապ», «Բեվիֆէպ», «Էնիլի օքնմիտ-րէպ» վէ պունճըլայըն հազըլմըշ օլմագ իշիւն հազըլան պա-ղը թէրքիպ վէ քէլիմէլէրէ րասթ կէլմէսէ, վէ «Անրն» իւմի իշարէթի հէրինէ տէ «Օնուն» կէօրսէ իտիմ, տահա զիյատէ սէվէճէքտիմ: Զիրա խալգ անլայապիլէճէյի լիտանլա անլար, վէ պիր զագէթա վէ հա րէսալէնին մէպտէսի տէ խալգա անլաթմագ տըր սանլըրմ:

Պինայէն սլէյհ, «Դրախտ»ը սիգինլէ, վէ սիգի տէ «Դըրախտ» իլէ թէպրիք, մուամմէրիյէթ վէ մուվաֆֆագիլիթ թէմէննի, վէ մուամվէնէթ ի գալէմիյէ վատ էտէրիմ գարտաշըմ:

ԱՂԵՔՍԱՆԴԻ ԳԸՅԸՃԵՍՆ

§ Պու վաթանտաշ րիֆիգին հիսսիյաթ, թէպրիքիաթ թէմէննիյաթ վէ վատընտան տօլայը զիյատէսիլիէ միւթէչէք-քիւրիւգ: Եր. Խ.

ՄԱՅՄՈՒՆԸ ՏԻՃՃԻՆԻՆ ՄԵՐԿԻԻԶԷՃԹԻ

Իշպու մուհաքէմէմ էոնասընտա ձիւրա Սալիհ նամ մա-լիւմ, վէ լաքին մէրտուտ պիր զաթըն պանա տօղրու խու-սուսի պիր ատավէթի օլտուղընը անլատըմ: Պու տէվր ի իս-թիպտատ մախլուգը՝ կէրէք միւսթանթըգ մէմուրը վէ կէրէք մահքէմէ ազասը սըֆէթ վէ մէմուրիյէթիլէ միւթէլիֆ պուլունուպ, էքսէտիյի եէրտէն պիչէր, սաղմատըղը եէրտէն թօփլար մագուլէսինտէն օլմասըլա, պիր կիւն տիւլէրինի

հափտըրմագ իւզրէ օտամա կէլմիշ վէ եէտիմտէ զիգըմէթ պիր խալի կէօրմիւշ իտի, անը քէնտինէ վէրմէքլիյիմի թէքլիֆ էթտի, հալ պու քի պէն անը Մուսուլտա Բէլէք-եան իլէ օրթագլըգ ալտըղըմը շու հալտէ խալինին քիւլլիյէն քէնտիմէ աիտ պուլունմաստըղընը պիւտիրէրէք թէքլիֆինէ ըու ի մուվաֆաբաթ իթմէմիշ իտիմ», իշթէ վագթըլա արա-մըզտա կէչէն պու մուհապէրէտէն տօլայլ հուզուրը մահքէ-մէտէ, սուրէթ ի աշիքհարէտէ, էօթէտէն պէրու ատապէթ սագլամըշ օլտուզը մէյտանա չըգմըշ տըր:

Պէն պաշլըճա հաֆթա մէսէլէսինտէն տօլայլ, եանի հէգէյաննամէլէրի կէօյա պիզզաթ շուրայա պուրայա սէվգ էթտիյիմ, վէ խօտ պէ խօտ ճամի տիվարլարընա, հիւքիւ-մէթ վէ թիւրք միւթէհայիզանը գօնագլարը գափուսընա հափըշտըրտըղըմ, վէ հագգըմը միւտաֆաա զըմնընտա միւ-թէնէվլի վասիթալար իսթիմալըլա, շիտտէթ ի լիսան, եա-նի պիւաֆիթուր հէր շէյի սէրպէսթճէ սէօյլէյէրէք, հիւ-քիւմէթին հագգըզըղընը տօղրուտան եիւզիւնէ չարփտը-ղըմ իչիւն ճինայէթլէ հիւքմ էտիլտիմ: Մէքթէպի Շահանէ-տէն մէէգուսն պուլունտըղըմ հասէպիլլէ մուհաքէմէ վէ իս-թինթագլըմը, եօզղատտա գուրուլան տիվանը հարպ հու-զուրընա փուզու պուլտու:

Հապսխանէտէ իքէն, Այտընտան կէլէն եօզղատ միւ-թէսարըֆընըն պիր կիւն հապսխանէյի զիյարէթինտէն պիւ իսթիֆատէ, քէնտիսինէ ըէճա էտիպ տիշ ալաթ ու էտէվա-թըմըն վէրիւմէսինի, պու սուրէթլէ հիշ տէյիլ իսէ հապս-խանէտէ պիր էքմէք փարաաը գազանմամա միւսաատէ պու-յուրմասընը թալէպ էթտիմ, փաշանըն լութֆէն պու շէյէ միւստատէ էթմէսիլլէ, էտէվաթըմ կէթիրիլիպ պանա վէրիւ-տի վէ պիզ հապսխանէնին պիր քէօշէսինտէ իճրաի սէնաաթա պաշլատըգ, օրատան նէ՞ վագթ հագայը գղըթարաճաղըմը պիւմէտիյիմտէն պունը տիւշինտիմ վէ հէմտէ օրատա իճրաի սէնաաթ էտէճէք գատարտա պէօ-յիւք պիր գալապալըգ մէվճուտ պուլունուլօր իտի, տ իւշին-տիմ քի պու ֆուրուսթտան իսթիֆատէ էթմէլիյիմ, նէմ-նաքըգ սէպէպիլլէ տիշլէրի աղըրյանըն հիսապը հօգ իտի, պէօյլէճէ մէտարը թէայիւշ օլմագ իւզրէ հապսխանէտէ տիւշիլլէ տէվամ էթտիք, վէ էփէյիճէտէ իշ օլուտ տօղ-րուտու ճապա միւշթէրիլէր սայէսինտէ:

(Տեվաթի)

«Դրախտ»ի ընթերցողներուն

Պէտք է միանգամ ընդ միշտ գիտցուի թէ՛ «Դրախտ»ը ո՛ր եւ է կուսակցութեան և յարանուանութեան չի պատկանիր, այլ միայն՝ Ազգային հասարակական անկաւառ եւ անկաւանդ օտկան է, սակայն և այնպէս առանց խտրութեան ամենազգի օգտաշատ յօդուածներուն համար բաց են «Իրախտ»ին դուռները:

Սօսցանք ԱՏԱՆԱՅԻ ԿԵԱՆՔԸ անուն գրքոյկը, սա՛ Ատանայի ահռելի դէպքին մէկ յիշատակագիրն է, իրազեկի մը, Յակոբ Էֆ. Թէրզեանի կողմէ գրուած: Կ'արժէ որ ամէն տուն մէկ մէկ հատ ունենայ իբր նուիրական յիշատակարան: Գին 3 դահ.: Կեդրոնատեղին «Ինդարան Թէրզեան» Գում. Գափու Կ. Պոլիս:

Այինք ի եօմ ի պեօեր նամ քիթապը մա էլ մէմնունիյէ գաւառը էթտիք: Իշպու կիւզէլ քիթապը ըհպէր ի հայաթ հալլիստէ հէր քէսէ խալիսանէ թափիյէ օլունուր: Պու քիթապ՝ էգմինէ ի աթիգարան գալմա պիր էսէր ի պիհէմթա տըր: Քրիստոստան պիր գաչ տէհր էվվէլ թիպէթ իւլէմասընտան պիրի՝ պիր նէվ թիպէթ լիսանըլա անը գալէմէ ալմըլ օլուպ, պիր միւտտէթ սօնրա պիր Ձին իմփէրաթօրը մարիֆէթիյէ Ձինճէյէ թէրճէմէ էթտիրիւիլ, անտէն տէ իրմէնիճէ գրաբար լիսանըն, անտէն տէ՝ իսթանպօլտա թիւճճարը միւթէպէրէտէն վէ էրպուպը գալէմտէն մէքթէպ ըհֆիգիմ Աղեքսանդր Էֆ. Գըյըճեան թիւրքէ լիսանընա թէրճէմէ էտէրէք մէվգիի ինթիշարա վազ էյլէմիլ վէ հասըլաթընը տա քիւլլիյէն Ատանա ֆէլէքգէտէկեանընա հասը էթմիլ տիր: Ձօգ գալմամըլ: Ֆիյ. 5 դշ.: Էմին Պէյ իյանընտա 13 նօմէրօտա Գըյըճեան պիրատէրլէր Էֆ. Լէրէ հախօտ իտարէխանէմիզէ միւրաճաաթ օլունմասը:

ԱՐՁԸ ԹԷՇԷՔԻԻԻՐ.— Էրմէնիճէ պիր գաչ եէվմի ղազէթալար իլէ թիւրքէն Աւետարեհր՝ ղազէթամըզըն նէլըրինտէն տօլայը սուրէթ ի սամիմանէտէ թէպրիք վէ թէմէննիյաթտա պուլունտըզլարը իչիւն թարաֆըմըզտան ան սամիմ իւլ գալպ արզը թէշէքքիւր:

— 333 —

Անոնք որ մեր թերթին ազդեր տալ կ'ուզեն, թէ ի Պոլիս և թէ ի գաւառս ոչ միայն նպաստաւոր գին կը պահանջուի, այլ, ձրի «Դրախտ» ալ կը տրուի ամբողջ 3 ամիս:

«Դրախտ»ը առաջիկայ նոր տարիէն սկսեալ պիտի բաւրեփոխուի և պիտի ընդլայնուի:

Թապիպ վե Ճերրահ

ՏՕՔԹՕՐ Տ. ԹԱՊԻՊԵԱՆ

Ամէրիկան թըպպ Տարիւլֆիւնունընտան մէզուն 20սէնէ-
լիք թէճրիպէսիյէ մարուֆ պէօյիւքէրէ վէ քիւչիւքէրէ
ա՛խտ էմրազը տախիլիյէ վէ ճիլտիյէյի վէ լաութալըզլա գա-
տըն խաթալըզլարընը, խուսուսիյէ պէլ սօղուզլըղը, էսքի
վէ եէնի ֆրէնկի վէ գանսէրի վէ սպիր իլէլ ի միւզմինէյի
Ամէրիկան վէ ինկիլիզ ուսուլը ճէտիտէլէրինէ թաթպիգէն
թէտավի իթմէքտէ տիր: Պէյ Օղլունտա Շիշլիտէ Անանեան
աբարթմանընտաքի տաիրէսինտէ հէր կիւն էօյլէնէ գատար
խաթէկեանը գապուլ էթտիյի կիպի, Փազար վէ Բէնճէն-
պիհտէն ժաատա էօյլէտէն սօնրա Սթանպօլտա եէնի Փօսթա-
խանէ գարշուընտա Ֆէրուխ պէյ խանընտաքի մուպէնէ
խանէսինտէ խաթալար թէտավի օլունուրլար: Ճուժա կիւն-
լէրի մէճճանէն:

Միմաիլէյ, Տօքթ. Բէնճէնպիհ կիւնլէրի էօյլէտէն
սօնրա Գատըլթէօյիւնտէ փազար եօլընտա իսթավրի Նիգօլա-
խտի էֆէնտինին էճգախանէ ինտէ պուլունըր:

ԿԵԴՐՈՍԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

Վ. ահրամ Ասատուրեան

ԿԷՏԻՔ ՓԱՇԱ—ՊԱԼԻ ՓԱՇԱ ԵՕԳՈՒՇՈՒ, Կ. ՊՈԼԻՍ

Այս դեղարանը որ ուղ ժամանակի մը մէջ հասարա-
կութեան վստահութեանը արժանացաւ, մասնաւորապէս
գեղերուն խիտ թարմութեանը, դեղագիրներու ճշգրիտ
պատրաստութեանը, և ցոյց տուած ուղղամտութեանը հա-
մար, այս անգամ իր բոլոր յաճախորդները գոհ ձգելու նը-
պտակով և յարգոյ հասարակութեան քաջախիտութեանը
վրայ, ինչպէս ուրիշ տարիներ, նոյնպէս այս տարի Նորվե-
կիայէն մեծաքանակ բերել տուած է

ՄՕՐԻԻԻ ԱՆԱՐԱՏ ԶԿԱՆ ԻԻՂԸ

ՈՐ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳԻՄԻԱԳԷՏՆԵՐԷՆ ԵՒ ԱՆՈՒԱՆԻ
ՐՈՒՇԵԿՆԵՐԷՆ ԳՆՆՈՒԱԾ ՈՒ ԱՆԽՈՐԳԱԽ ԸԼԼԱԼԸ ՎԱ-
ԻԵՐԱՑՈՒԱԾ Է:

ՄՕՐԻԻԻ ձկան իւղը կը ծախուի մեծ ու փոքր քանո-
կութեամբ մասնաւոր շիշերու մէջ: Կէտիք Փաշա—Պալի
Փաշա դեղարանը կը գտնուին նաեւ ամէն ահսակէ մեծ քա-
նակութեամբ քօնեաքներ, օ տը քօլօններ և անգլիական ու
գաղղիական գեղերու մթերք մը:

ՎԱՀՐԱՄ ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ դեղարանը, յաճախորդներուն
փափաքին համաձայն, ի դիւրութիւն, կը հրաւիրուի ուզուած
բժիշկը: Այս դեղարանը կը յաճախեն արդէն փորձ ու կարող
բժիշկներ, որոնք դեղարանին յարակից մասնաստեղծակին
մէջ կը գարմանեն ամէն տեսակ հիւանդութիւններ: Բշ. և
Եշ. օրերը, կէս օրէ վերջ ձրի գարմանում:

Դ Ե Ղ Ա Ր Ա Ն Ը Ո Ւ Ն Ի

Գ Ի Շ Ե Ր Ա Յ Ի Ն Ս Պ Ա Ս

ԴԵՂԱՐԱՆ «ԱՏԱՆԱ»

ՅԱԿՈԲ Յ. ԹԵՐԶԵԱՆ

ԴՈՒՄ-ԳԱՓՈՒ Կ. ՊՈԼԻՍ

Ատանայի աղետալի ջարդին մէջ մեծ կորուստներ տալով հազիւ ազատած դեղագործ Յակոբ էֆ. Թէրզեան համակիրներու աջակցութեամբ բոլորովին նոր դեղարան մը հիմնած է Գում Գափուի մէջ «Դեղարան Ատանա» անունով. Պալի Փաշա զառ ի վարին ստորադրւի:

Դեղերն ամբողջապէս թարմ և լաւագոյն տեսակէն ըլլալով, մանաւանդ միշտ քիչ շահով շատ գործ ունենալու սկզբունքովը կարճ ժամանակի մը մէջ հանրութեան համակրութեանն ու վստահութեանը արժանացած է:

Դեղագործ Թէրզեան էֆ. ի անխոնջ ջանքերովն և թէ գիշեր ցօրեկ ամէն վայրկեան իր դեղարանին մէջ ներկայ գտնուելով բոլոր դեղերն անձամբ իր ձեռքովն պատրաստելովը յանձնարարելի է ամէն բժախնդիր հիւանդներու և հիւանդի տէրերու:

Ամէն դեղերու պէս Ձկան իւղի ամենամաքուր թարմ տեսակը կը վաճառուի Թէրզեան էֆ. ի քով միշտ քիչ շահով:

ՏՕՔԹ. Յ. ՍՈՒՃԵԱՆ,

Էմրազը պէվլիէ, թէնասիւլիէ վէ էմրազը տախիլիէ միւթէխասիւթի, էսքի վէ հէնի պէլ սօղուզուզը վէ ֆրէնկի վէ պէօպրէք վէ մէսանէ վէ էմու վէ միտէ խասթալըզլարընը զայէթ սէրի վէ հէնի ուսուլ իւզրէ թէտավի էտէր:

Հէր կիւն էօյլէտէն ոսնրա Պաղճէ Գափուսընտա Մի. նասեան էֆ. էնզախանէսինտէ պուլունուր, Իւք վիզիթա մէճճանէն:

ՏՈՔԹ. ՊՕՂՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Բժիշկ Ս. Փրկչի Վզգ. Հիւանդանոցի

Կը դարմանէ արանց և կանանց ներքին և արտաքին հիւանդութիւններ, ինչպէս նաեւ ջերմամիզութիւն և գաղիական ախտը բժշկական նորագոյն դրութեամբ:

Բաց ի Չորեքշաբթի և Ուրբաթ օրերէ, ամէն օր կէս օրէն վերջ կը գտնուի իր բնակարանը Կէտիկ Բաշա Ասաւուրեան դեղարանին գիմացը Միւսէլլիմ փողոց թիւ 6:

Նրկուշաբթի ժամը 8-10 Յակոբ էֆ. Թէրզեանի «Ատանա» Դեղարանը, Գում. Գափու, և Հինգշաբթի ժամը 8-10 Վահրամ էֆ. Ասաաւուրեանի Կեդրոնական Դեղարանին մէջ, Զրիապէս կը դարմանէ աղքատ հիւանդները: